

վրայ՝ Քիւրդերը աւելի չահագրգռութիւն կը ներկայացնեն իրենց Հնդկա-Եւրոպեան ցեղակցութեամբ քան Թիւրքերը (\*):

Իրականութեան վրայ եղած հետազոտութիւնները սկսած են նախորդ հարիւրամեակի վերջէն ոչ այնքան առաջ՝ Անկիսիլիաի ժամանակը. միայն վերջին քսան տարուան ընթացքին ձեռք բերին լեզուաբանական և պատմաբանական գիտութեան մասնագիտական նշանակութիւնը:

Հին ժամանակի Իրանեան ժողովուրդներու խմբերի ներկայացուցիչները, բաց ի Բաբելոնական և Ասորական տիրապետող թագաւորներէ և պատերազմիկ դասերէ՝ մենք կը հաշուենք Բագտրիաններ, Մէտիացիներ, Պէրեր և Հայեր. իսկ լեզուներէն՝ որոնցմով մեզ հասած են գրաւոր յիշատակներ, մեզ յայտնի են առ այժմ հին-պարսկական (երրորդ կարգի բեւեռագրերու լեզուն կամ Ախեմենեան.) Ալեքսական, և կամ ինչպէս կը կոչուի Զնտական, երկու բարբառով. ատոնցմէ մէկը, որով հեղինակուած են կրօնական երգերը, կը համարուի հին Բագտրիերէն և միւսը ընդհանրապէս հին-Իրաներէն Գուզ-վարե, (Uzopesch, Huzuresch և կամ ինչպէս կը կոչուի Պեխ-լեվեան (Պահլաւ) լեզու. Պարս (կամ Պագիւնտական լեզու), և Հայ լեզու:

Կ'ենթադրուի թէ, Պարսկական, Ասորական, և Բաբելոնեան թագաւորներու բեւեռագրական արձանագրութիւններու շարք մը, որոնցմէ կան դեռ անորոշ գրութեան մէջ մնացածներ, անոնցմէ մէկը կը բանայ նոր աղբիւր Իրանեան լեզուի,

---

(\*) Ուստի Բրոֆէսէօրը աւելի հետաքրքրուելով անոնց՝ քաղաքականութեան մէջ ունենալիք դերով ինչպէս վերջն ալ կը յիշէ, մեր կարծիքով քիչ մը չափազանցութեան կը տանի համեմատութիւնը Քիւրդերու ու Թիւրքերու միջև: Թիւրքերը պատմականապէս ու մինչ ցարք Արեւելքի ու Արեւմուտքի մէջ կատարած իրենց քաղաքական դերով իրականութիւն մը կը հաստատեն ու սխալ կը համեն նոյր համեմատութիւնը փաստօրէն: